ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Զեկույց 2018-2019 թվականներին իրավապաշտպանների նկատմամբ իրականացված հետապնդումների և իրավախախտումների մասին

ԵՐԵՎԱՆ, 2019թ.

Սույն զեկույցը մշակվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակում իրականացվող «Մարդու իրավունքներ . մշտադիտարկում և հրապարակայնություն» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանության կոալիցիայի անդամ «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպության կողմից:

Զեկույցն ամփոփում է «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպության կողմից 2018-2019 թվականներին վերհանված այն հիմնական իրավախախտումները, որոնց բախվել են իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձինք և կազմակերպությունները, տվյալ իրավախախտումների հիմնական պատճառները և իրավապահ մարմինների կողմից ձեռնարկված գործողությունները կամ ցուցաբերած անգործությունը:

Զեկույցի համար հիմք են հանդիսացել «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպության փաստահավաք աշխատանքները, սոցիալական կայքերի մշտադիտարկումը, լրատվական հարթակներում տեղ գտած հոդվածները և նյութերը:

Զեկույցը բաղկացած է 4 մասից և ներառում է ՀՀ Կառավարությանը և այլ իրավասու մարմիններին ուղղված առաջարկներ:

Զեկույցի բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպությունը և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Բովանդակություն

- Նախաբան 3
- Իրավախախտների կողմից թիրախավորված՝ իրավապաշտպան գործունեություն ծավալող հիմնական խմբերը 4
    1) **1. Փաստաբաններ** 4
    2) **2. Իրավապաշտպաններ** 5
    3) **3. Լրագրողներ** 6
- Իրավախախտումների ընդհանուր բնութագիր 7
- Իրավախախտումների վերացմանն ուղղված գործողություններ և համապատասխան իրավապահ մարմինների արձագանք. իրավական հետևանքներ 8
- Հիմնական խնդիրները 9
- Առաջարկներ 11
- Աղբյուրներ 13

Նախաբան

Վերջին տարիներին Հայաստանում իրականացված ուսումնասիրությունները և հետազոտությունները մշտապես արձանագրել են մարդու իրավունքների ոտնահարումներ՝ ներառյալ իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձանց և կազմակերպությունների իրավունքների խախտման բազմաթիվ դեպքեր։ Չնայած 2018թ. ապրիլին Հայաստանում գրանցված շրջադարձային փոփոխություններին՝ իրավապաշտպանների իրավունքների ապահովման խնդիրը շարունակում է արդիական մնալ թե օրենսդրական և թե իրավապահ գործունեության իրականացման մակարդակում։

2018թ. իրավապաշտպանները Հայաստանում բազմիցս բախվել են հասարակության բացասական հակազդեցությանը, նրանց հանդեպ հնչել են տարաբնույթ վիրավորանքներ և սպառնալիքներ, տարածվել է կեղծ տեղեկատվություն։ Քաղաքական զարգացումների արդյունքում իրավապաշտպանները հաճախ հայտնվել են հասարակության մեջ քաղաքական այս կամ այն ուժի նկատմամբ հակակրանք սերմանելու նպատակ հետապնդող տարատեսակ մանիպուլյացիաների կենտրոնում, ինչի արդյունքում հասարակության տարբեր խմբերի կողմից որակվել են որպես դավաճան և աշխարհաքաղաքական տարբեր շահերին սպասարկող։ Իրավապաշտպաններից ոմանք ենթարկվել են նաև ֆիզիկական բռնության։ Օրենսդրական բացերի և իրավապահ մարմինների ենթադրյալ անգործության պատճառով իրավապաշտպանների իրավունքների խախտումների վերաբերյալ դիմումները երբեմն մերժվել են՝ նպաստելով անպատժելիության մթնոլորտի ձևավորմանը և նպանատիպ իրավախախտումների շարունակականությանը։

Այնինչ Հայաստանի Հանրապետությունը, ստորագրելով ՄԱԿ-ի «Իրավապաշտպանների մասին հռչակագիրը», առաջնային պարտավորություն եւ պարտականություն է ստանձնել ոչ միայն պաշտպանել, աջակցել և իրականացնել մարդու բոլոր իրավունքները և հիմնարար ազատությունները, այլև ձեռնարկել անհրաժեշտ քայլեր՝ նպաստելու իրավապաշտպան անհատների, խմբերի և ընկերակցությունների գործունեության իրականացմանը։

Սույն զեկույցի նպատակն է արձանագրել ՀՀ-ում 2018-2019 թվականներին իրավապաշտպանություն իրականացրած անձանց իրավունքների խախտման դեպքեր և ուսումնասիրել դրանց հետագա ընթացքը, վերլուծել համապատասխան իրավապահների և այլ իրավասու մարմինների կողմից իրականացված գործողությունները կամ ցուցաբերած անգործությունը։ Վերհանված օրինաչափությունների և հիմնական խնդիրների հիման վրա զեկույցում ներկայացվել են ՀՀ Կառավարությանը և այլ իրավասու մարմիններին ուղղված առաջարկներ։

Իրավախախտների կողմից թիրախավորված՝ իրավապաշտպան գործունեություն ծավալող հիմնական խմբերը

Զեկույցը դիտարկում է թիրախային երեք խումբ՝ փաստաբաններ, իրավապաշտպաններ և լրագրողներ։

1. Փաստաբաններ

«Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպության ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այս շրջանում հիմնականում թիրախավորվել են հասարակական մեծ հնչեղություն ունեցող գործերով ներգրավված փաստաբանները, որոնք դատարանում ներկայացնում են նախկին իշխանության ներկայացուցիչների շահերը։

Մասնավորապես՝ 2018թ. հուլիսին (դեպքի արձանագրման ամսաթիվ) «Հայաստան» համահայկական հիմնադրամի տնօրեն Արա Վարդանյանի պաշտպան Երվանդ Վարոսյանի հասցեին մի շարք վիրավորական արտահայտություններ են հնչեցվել։ Իրավապաշտպանը չի դիմել որևէ կառույցի և քրեական գործ հարուցված չէ։ Ֆեյսբուքյան տիրույթում բազմաթիվ վիրավորանքների և սպառնալիքների են արժանացել նաև Ռոբերտ Քոչարյանի պաշտպան Հայկ Ալումյանը, Մանվել Գրիգորյանի կալանավորման գործով ներգրավված փաստաբան Լևոն Բաղդասարյանը և Մասիսի նախկին քաղաքապետ Դավիթ Համբարձումյանի պաշտպան Տիգրան Աթանեսյանը։ Վերջինս իր անձին և ընտանիքին ուղղված վիրավորանքներին արձագանքել է նույն կերպ, ինչի արդյունքում Փաստաբանական պալատը իր նկատմամբ հարուցել է կարգապահական վարույթ։

Փաստաբանների նկատմամբ իրավախախտումները, սակայն, չեն սահմանափակվել վիրավորանքների և սպառնալիքների հնչեցմամբ։ 2019թ. հունվարի 11-ին (դեպքի արձանագրման ամսաթիվ) Վերաքննիչ դատարանի դիմաց Մանվել Գրիգորյանի ազատ արձակման դեմ բողոքող մի խումբ անձինք խոչընդոտել են նրա փաստաբան Արսեն Մկրտչյանի ազատ տեղաշարժը, թույլ չեն տվել մեքենայով դուրս գալ տարածքից և ենթադրաբար վնաս են հասցրել մեքենային։ 2019թ. հունվարի 17-ին (դեպքի արձանագրման ամսաթիվ) հերթական նիստի ժամանակ ցուցարարները մոտեցել են փաստաբանին և ներողություն խնդրել տեղի ունեցած դեպքի համար։

Այսպիսով՝ դիտարկված ժամանակաշրջանում արձանագրվել է փաստաբանների իրավունքների խախտման 5 դեպք։ Փաստաբանները հիմնականում առնչվել են վիրավորանքների և սպառնալիքների՝ պայմանավորված հասարակական մեծ հնչեղություն ունեցող դատական գործերում ներգրավվածությամբ։ Այս պարագայում հիմնական խնդիր է հանդիսացել փաստաբանի անձի և գործունեության նույնականացումը։ Փաստաբանի գործունեության բնույթի թյուրընկալման արդյունքում մեղադրյալի ենթադրյալ հանցանքների նկատմամբ վրդովմունքը տարածվել է

փաստաբանի և երբեմն վերջինիս ընտանիքի վրա՝ հանգեցնելով նրանց իրավունքների խախտմանը։

2. Իրավապաշտպաններ

«Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպության ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մշտադիտարկման ժամանակահատվածում Հայաստանում հիմնականում թիրախավորվել են ԼԳԲՏ անձանց շահերը պաշտպանող և/կամ բնապահպանական օրակարգ առաջ մղող իրավապաշտպանները։

Մասնավորապես՝ 2018թ. օգոստոսին (դեպքի արձանագրման ամսաթիվ) ՀՀ Շուռնուխ գյուղում տեղի ունեցած բռնության դեպքը դատապարտող ֆեյսբուքյան գրառումից հետո իրավապաշտպան Արթուր Սաքունցի նկատմամբ բազմաթիվ վիրավորական արտահայտություններ, տեքստեր և նկարներ են հրապարակվել սոցիալական ցանցերում։

Առանձնակիորեն թիրախավորվել է նաև բնապահպան, Ամուլսարի լեռան վրա նախատեսվող հանքի շահագործման դեմ պայքարող ակտիվիստ Անի Խաչատրյանը։ Սոցիալական ցանցերում նրա նկատմամբ բազմաթիվ վիրավորանքներ, սպառնալիքներ և սեռական բնույթի հայհոյանքներ են հնչել՝ հիմնականում Լիդիան Արմենիա կազմակերպության աշխատակիցների և նրանց հարազատների կողմից։ Ֆեյսբուք սոցիալական ցանցում սեռական բնույթի վիրավորանքների առթիվ ՀՀ Ոստիկանություն հաղորդում է տվել նաև իրավապաշտպան և ակտիվիստ, «Վելես» ՀԿ հիմնադիր Մարինա Պողոսյանը, սակայն նրա դիմումը ևս չի ընդունվել։

Տարբեր վիրավորանքներ և հայհոյանքներ են հնչել նաև իրավապաշտպաններ Վարդան Համբարձումյանի և Դանիել Իոաննիսյանի հասցեին։ «Անկախ դիտորդ» դաշինքի անդամ Դանիել Իոնիսյանը մասնավորապես թիրախավորվել է Երևանի Ավագանու ընտրությունների ժամանակ ծավալած մասնագիտական գործունեության արդյունքում, ինչպես նաև 2019թ. հունվարին (դեպքի արձանագրման ամսաթիվ) Ասյա Խաչատրյանին սատարող գրառում կատարելու վերաբերյալ։ Վիրավորանքներից զատ նրա մասին նաև տարածվել է կեղծ տեղեկատվություն։

Իսկ 2019թ. մարտի 8-ին (դեպքի տեղի ունենալու ամսաթիվ) Ազգային Ժողովի Մարդու իրավունքների հանձնաժողովում լեզբի, տրանս և բիսեքսուալ կանանց իրավունքներին անդրադարձող հայտարարությունից հետո սոցիալական ցանցերում ատելության խոսքի և տարատեսակ վիրավորանքների, սպառնալիքների մեծ հոսք է սկսվել «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի ղեկավար, իրավապաշտպան Լարա Ահարոնյանի նկատմամբ։ Վերջինս իր դեմ սպառնալիքների առթիվ իրավապահ մարմիններին է դիմել մարտի 11-ին։ Ոստիկանության կազմակերպված հանցագործության դեմ պայքարի գլխավոր վարչությունում նյութեր են նախապատրաստվում տվյալ գործի վերաբերյալ։

Սպառնալիքների և հայհոյանքների նման տարափ է ուղղվել նաև «Իրավունքի կողմ» հասարակական կազմակերպության նախագահ Լիլիթ Մարտիրոսյանի նկատմամբ այն բանից հետո, երբ վերջինս 2019թ. մարտի 5-ին (դեպքի տեղի ունենալու ամսաթիվ) Ազգային ժողովում «Մարդու իրավունքների ազգային օրակարգ. ՄԱԿ-ի

համընդհանուր պարբերական դիտարկում» թեմայով խորհրդարանական լսումների ժամանակ ելույթ ունեցավ տրանսգենդեր անձանց իրավունքների պաշտպանության մասին և խտրական վերաբերմունքի ենթարկվեց ԱԺ Մարդու իրավունքների և հանրային հարցերի հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյանի կողմից։ Այնուհետև համացանցում Լիլիթ Մարտիրոսային հասցեին սկսեցին հնչել բազմաթիվ վիրավորանքներ և կյանքին և առողջությանը սպառնացող մեկնաբանություններ։ Նա նույնիսկ ստիպված էր լքել իր բնակության վայրը՝ անվտանգության նկատառումներով։ Լիլիթ Մարտիրոսյանը դիմել է ոստիկանություն, սակայն նրա դիմումը մերժվել է։

Իրավապաշտպանների դեպքում նույնպես իրավախախտումները չեն սահմանափակվել վիրավորանքներով և կեղծ տեղեկատվության տարածմամբ։ Արձանագրվել են նաև ֆիզիկական ոտնձգությունների դեպքեր։ Մասնավորապես՝ 2018 թվականի նոյեմբերի 2-ին (դեպքի արձանագրման ամսաթիվ) 2 ավտոմեքենա հետապնդել են «Նոր Սերունդ» մարդասիրական ՀԿ-ի աշխատակիցների ավտոմեքենան։ Աշխատակիցները ֆիքսել են իրենց հետապնդող մեքենաների համարանիշները և դրանցում գտնվող անձանց ինքնությունը։ Հետապնդումը պայմանավորված է եղել Հայաստանում ԼԳԲՏ ֆորումի կազմակերպման վերաբերյալ լուրերով։ ՀԿ աշխատակիցներին հետապնդողներից մեկը իր ֆեյսբուքյան էջում կատարել է հետապնդումն արձանագրող գրառում։ Դեպքի առթիվ հաղորդում է ներկայացվել ոստիկանություն, սակայն հանցագործության հատկանիշներ չեն հայտնաբերվել։ Հետապնդող անձանցից մեկը հրավիրվել է ոստիկանություն՝ պրոֆիլակտիկ բնույթի զրույցի։

Այսպիսով՝ դիտարկված ժամանակաշրջանում արձանագրվել է իրավապաշտպանների իրավունքների խախտման 8 դեպք։ Հիմնականում թիրախավորվել են որոշակի հրապարակայնություն վայելող իրավապաշտպանները, որոնք արտահայտել են իրենց կարծիքը հասարակության մեջ բուռն հակազդեցություն առաջացնող դեպքերի և թեմաների վերաբերյալ։ Նմանատիպ թեմաները դարձել են ներկա իշխանություններին վարկաբեկել փորձող մանիպուլյացիաների առարկա, ինչն էլ ավելի խոցելի է դարձրել հատկապես ԼԳԲՏ անձանց և գենդերային հավասարության համար պայքարող իրավապաշտպաններին։ Նմանատիպ մանիպուլյացիաներ են կիրառել նաև տարբեր խոշոր ընկերություններ, որոնց հետագա գործունեությունը վտանգի տակ է դրվել իրավապաշտպանների կողմից բնապահպանական խնդիրների բարձրաձայնման արդյունքում։ Հատկանշական է նաև կին իրավապաշտպանների կրկնակի խոցելիությունը։ Դիտարկված դեպքերում կանանց նկատմամբ հնչել են սեռական բնույթի բազմաթիվ հայհոյանքներ և տարածվել անձնական կյանքը մանրամասնող կեղծ տեղեկատվություն։

3. Լրագրողներ

«Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպության կողմից արձանագրված՝ լրագրողների նկատմամբ իրականացված իրավախախտումները կրել են սպառնալիքների, հայհոյանքների և վիրավորանքների բնույթ։

Մասնավորապես՝ 2018թ. հունիսին (դեպքի արձանագրման ամսաթիվ) Irakanum.am և Armday.am լրատվական կայքերի ներկայացուցիչ Փայլակ Ֆահրադյանն իր

մասնագիտական աշխատանքն ԱԺ-ում իրականացնելիս հանդիպել է կոպիտ վերաբերմունքի և վիրավորանքի նախորդ գումարման Ազգային Ժողովի ՀՅԴ խմբակցության պատգամավոր Անդրանիկ Կարապետյանի կողմից, որը որոշ ժամանակ անց հրապարակավ ներողություն է խնդրել լրագրողից։

Իսկ 2019թ. մարտի 20-ին (դեպքի արձանագրման ամսաթիվ) Politik.am կայքի պատասխանատու Բորիս Մուրազիի ֆեյսբուքյան հրապարակումից հետո, որում նա նշում էր ՀՀ ոստիկանապետի կողմից իր անձի նկատմամբ հնչեցված սպառնալիքների մասին, սոցիալական ցանցերում նրա և նրա ընտանիքի նկատմամբ սպառնալիքների և վիրավորնանքների մեծ տարափ է սկսվել։ Վիրավորանքները պարունակում են նաև մեկնաբանություններ լրագրողի ազգային պատկանելության վերաբերյալ (լրագրողն ազգությամբ եզդի է)։ Բորիս Մուրազիի համոզմամբ ինքը թիրախավորվում է հիմնականում կեղծ օգտատերերի կողմից։ Իրավախախտումների վերաբերյալ դիմել է ոստիկանություն, որտեղ տվյալ պահին նյութեր են նախապատրաստվում։

Դիտարկված ժամանակաշրջանում արձանագրվել է լրագրողների իրավունքների խախտման 2 դեպք։

Իրավախախտումների ընդհանուր բնութագիր

Վերոնշյալ անձանց նկատմամբ իրականացված իրավախախտումները դասակարգվել են 3 հիմնական խմբի՝

- Ֆիզիկական բռնություն
- Վիրավորանքներ և սպառնալիքներ
- Հետապնդում

Ֆիզիկական բռնության մեկ դեպք է գրանցվել ՝ փաստաբանի ազատ տեղաշարժի սահմանափակման տեսքով։

ՀՀ-ում տվյալ ժամանակաշրջանում իրավապաշտպանների նկատմամբ կատարված իրավախախտումներից թերևս ամենատարածվածը վիրավորանքները, հայհոյանքները և սպառնալիքներն են՝ հատկապես սոցիալական ցանցերի միջոցով։ Նման կերպով թիրախավորվել են թե փաստաբանները և թե իրավապաշտպանները։ Վիրավորանքները և սպառնալիքները հաճախ պարունակել են ատելության խոսք։ Սպառնալիքները հիմնականում ուղղված են եղել իրավապաշտպանների կյանքին և առողջությանը, սեռական անձեռնմխելիությանը վնաս հասցնելուն։ Կանանց դեպքում նմանատիպ իրավախախտումներն ուղեկցվել են սեռական բնույթի հայհոյանքներով, իսկ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ հանդիսանալու դեպքում վիրավորանքներում շեշտվել է նաև ազգային պատկանելությունը։ Գրանցվել են նաև կեղծ տեղեկատվության տարածման դեպքեր։ Մշտադիտարկման ժամանակահատվածում գրանցվել է վիրավորանքների և սպառնալիքների 13, կեղծ տեղեկատվության տարածման՝ 2 դեպք։

Դիտարկվել է իրավապաշտպանների հետապնդման մեկ դեպք։ Հատկանշական է, որ հետապնդողները չեն հապաղել իրենց անօրինական գործողությունները հրապարակայնացնել սոցիալական մեդիայում։

Իրավախախտումների վերացմանն ուղղված գործողություններ և համապատասխան իրավապահ մարմինների արձագանք. իրավական հետևանքներ

«Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպությունը դիտարկել է նաև, թե ինչ միջոցներ են ձեռնարկել փաստաբանները, իրավապաշտպանները և լրագրողները և իրավապահ մարմիններին դիմելու դեպքում ինչպիսի արձագանք են ստացել, ինչ գործողություններ են իրականացրել իրավապահ մարմինները խախտումները վերացնելու և իրավախախտներին պատասխանատվության ենթարկելու համար։

Դիտարկված ժամանակաշրջանում արձանագրված իրավախախտումների վերաբերյալ հարուցված քրեական գործեր չկան։ Միայն Լարա Ահարոնյանի և Բորիս Մուրազիի դիմումների հիման վրա նյութեր են նախապատրաստվում ոստիկանությունում։

Մի շարք դեպքերում իրավապաշտպանները դիմել են ՀՀ ոստիկանություն, սակայն նրանց դիմումները չեն ընդունվել՝ հիմնականում հանցակազմի բացակայության պատճառով։ Իրավապահ մարմինների ենթադրյալ անգործությունը պայմանավորված է եղել թե օրենսդրական բացերով և թե աշխատակիցների իրազեկվածության ոչ բավարար մակարդակով։ Մասնավորապես, հաշվի առնելով որ ՀՀ օրենսդրությունը հավուր պատշաճի չի կարգավորում սոցիալական մեդիայում իրավախախտումների դեպքերը, ինչպես նաև ատելության խոսքի դրսևորումները, իսկ վիրավորանքի և զրպարտության համար նախատեսված պատասխանատվությունը 2010թ. ապաքրեականացվել է և տեղափոխվել քաղաքացիական իրավահարաբերությունների դաշտ, իրավապահ մարմինները հաճախ հնարավորություն չեն ունեցել հաղորդված իրավախախտումներում քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմ հայտնաբերել։ Բացի այդ, բավականաչափ իրազեկված չլինելով իրավապաշտպանների նկատմամբ իրավախախտումների յուրահատկությունների ու ոլորտում առկա օրենսդրական բացերի վերաբերյալ՝ իրավապահ մարմինները հաճախ կարևորություն չեն տվել նմանատիպ իրավախախտումներին՝ այդպիսով չապահովելով խախտված իրավունքների վերականգնումը և հետագա իրավախախտումների կանխումը և նպաստելով անպատժելիության մթնոլորտի ձևավորմանը։ Վերոնշյալ խնդիրները նաև հիմք են հանդիսացել նրան, որ իրավապաշտպաններից ոմանք չեն դիմել իրավապահ մարմիններին՝ նախապես ենթադրելով, որ իրենց դիմումը չի ընդունվելու։

Այսպիսով՝ դիտարկված իրավախախտումների վերաբերյալ քրեական գործ չի հարուցվել։ Իրավապաշտպաններից 4-ի դիմումներին իրավապահ մարմինները ընթացք չեն տվել, 2-ի դիմումի հիման վրա նյութեր են նախապատրատվում, իսկ իրավապաշտպաններից 8-ը իրավաբանական գործողություններ չեն ձեռնարկել։

Հիմնական խնդիրները

Ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել իրավապաշտպանների իրավունքների ապահովման ոլորտի մի շարք խնդիրներ և բացասական օրինաչափություններ: Հիմնական խնդիրներից է իրավապաշտպան գործունեության տարբեր ասպեկտներին հասարակության որոշ խմբերի հակազդեցությունը, որը դրսևորվում է տարատեսակ իրավախախտումների, ագրեսիվ գործողությունների միջոցով և միտված է իրավապաշտպաններին վարկաբեկելուն, զրպարտելուն և պիտակավորելուն, և այդ հակազդեցության տարատեսակ արտահայտումներին իրավական բնութագիր տալու անհնարինությունը՝ պայմանավորված օրենսդրական բացերով և իրավապահ մարմինների ենթադրյալ անգործությամբ:

Վերհանված խնդիրները հետևյալն են.

- Իրավապաշտպան գործունեության վերաբերյալ հասարակության իրազեկվածության ցածր մակարդակ:
- Տարատեսակ լրատվամիջոցների և տեղեկատվական այլ հարթակների միջոցով մանիպուլյատիվ տեղեկատվության տարածում:
- ՀՀ-ի կողմից ստորագրված՝ ՄԱԿ-ի «Իրավապաշտպանների մասին հռչակագրի» տեղայնացմանը և ապահովմանն ուղղված պետական քաղաքականության բացակայություն: ՄԱԿ-ի «Իրավապաշտպանների մասին հռչակագիր»-ը ընդունվել է 1998թ.:

  Վավերացնելով վերոնշյալ հռչակագիրը՝ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է մի շարք պարտավորություններ, որոնց շարքում են.

  - խախտված իրավունքների վերականգնման ապահովում,
  - խախտումների վերաբերյալ առանց անպատշաճ հետաձգման և անկողմնակալ հետաքննության իրականացում,
  - հռչակագրով սահմանված իրավունքների իրավաչափ իրականացման հետևանքով առաջացած խախտումներից, սպառնալիքներից, հատուցումից, խտրականությունից, ճնշումից կամ այլ կամայական գործողություններից պաշտպանություն,
  - մարդու իրավունքների պաշտպանության և ապահովման ուղղությամբ գործող ազգային անկախ ինստիտուտների ստեղծման և զարգացման ապահովում և աջակցում,
  - ֆորմալ և մասնագիտացված կրթության բոլոր մակարդակներում մարդու իրավունքների ուսուցանման ապահովում:

  Սակայն այս պարտավորությունների կատարումն ապահովող ներպետական քաղաքականություն չի մշակվել և այդ ուղղությամբ համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

- Իրավապաշտպանների իրավունքներն ամրագրող և պաշտպանության մեխանիզմներ սահմանող օրենսդրական ակտի բացակայություն:

ՀՀ օրենդրական դաշտը չի ներառում «իրավապաշտպան» հասկացությունը սահմանող և իրավապաշտպանների իրավունքների խախտման կանխարգելման երաշխիքներ պարունակող իրավական ակտ: Իրավապաշտպանների նկատմամբ կատարված իրավախախտումները կարգավորվում են ընդհանուր օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով: Մասնավորապես՝ հանցակազմի տարրեր պարունակող իրավախախտումները տեղ են գտել ՀՀ քրեական օրենսգրքում, վիրավորանքներին և զրպարտությանը վերաբերող կարգավորումները նախատեսված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: Որոշակի կարգավորումներ կան նախատեսված «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով, սակայն այս իրավական ակտերը համապարփակ կերպով չեն ապահովում իրավապաշտպանների իրավունքների իրացումը և պաշտպանությունը:

- Փաստաբանական գործունեության վերաբերյալ հասարակության շրջանում թյուրընկալումների առկայություն, փաստաբան-անձ հասկացությունների միասնական ընկալում:
- Խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությանբ զբաղվող իրավապաշտպանների անվտանգության ոչ պատշաճ ապահովում:
- Իրավապահ մարմինների ոչ պատշաճ արձագանք:
- Կին իրավապաշտպանների կրկնակի թիրախավորում:
- Սոցիալական ցանցերում և այլ առցանց հարթակներում գրառվող վիրավորանքները և սպառնալիքները կարգավորող իրավական ակտերի բացակայություն:
- Հասարակության մեջ ատելության խոսքի և կարծրատիպային մտածողության, բռնության մշակույթի առկայությունը:
- Վիրավորանքների և զրպարտության ապաքրեականացման արդյունքում առաջացած խնդիրներ՝ կապված իրավախախտներին պատասխանատվության ենթարկելու և հետագա նմանատիպ գործողությունները կանխելու հետ:

2010թ.-ին ՀՀ քրեական և քաղաքացիական օրենսգրքերում կատարված փոփոխությունների արդյունքում վիրավորանքը և զրպարտությունը ապաքրեականացվեցին և տեղափոխվեցին քաղիրավական հարաբերությունների դաշտ: Օրենսդրական այս փոփոխություններից հետո դրական արդյունքներին զուգահեռ գրանցվել են նաև որոշակի խնդիրներ՝ հատկապես մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող անձանց նման իրավախախտումներից պաշտպանելու և խախտված իրավունքները վերականգնելու հարցում:

ՀՀ արդարադատության նախարարությունը 2019 թվականի հունվարի 15-ից 30-ն ընկած ժամանակահատվածում e-draft.am կայքում հանրային քննարկման է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով առաջարկվում է պատասխանատվություն նախատեսել փաստաբանին կամ նոտարին՝ կապված նրա մասնագիտական գործունեության կամ լիազորությունների իրականացման հետ, վիրավորանք հասցնելու կամ նրա նկատմամբ բացահայտ

անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու, ինչպես նաև նրա ընտանիքի անդամի սպանության, առողջությանը վնաս պատճառելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիք ներկայացնելու համար, ինչպես նաև սահմանել պատասխանատվություն փաստաբանին զրպարտելու համար: Նախագծի հիմնավորման համաձայն՝ նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջին շրջանում հաճախ են դարձել փաստաբաններին՝ իրենց մասնագիտական գործունեության ընթացքում վիրավորելու և զրպարտելու դեպքերը, մինչդեռ միայն քաղաքացիաիրավական պատասխանատվությունը արդյունավետ միջոց չի հանդիսանում վերջիններիս արժանապատվությունը և գործարար համբավը պաշտպանելու համար: Նախագծի հեղինակները կարծում են, որ քրեական պատասխանատվություն նախատեսելը պրևենտիվ (կանխիչ) նշանակություն կունենա: Լրագրողներին և իրավապաշտպանների՝ նման իրավախախտումներից պաշտպանության միջոցներ դեռևս չեն նախատեսվել:

Առաջարկներ

Հիմք ընդունելով արձանագրված իրավախախտումները և վերոշարադրյալ խնդիրները՝ «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպությունը հանդես է գալիս հետևյալ առաջարկներով.

- Ընդունել օրենսդրական ակտ, որը կկարգավորի իրավապաշտպանների գործունեությունը և կապահովի նրանց իրավունքները, այդ իրավունքների խախտումների կանխման և վերականգման մեխանիզմներ կստեղծի:
  Իրավապաշտպանների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող Protection International կազմակերպությունը 2012թ. ծավալուն հետազոտություն է իրականացրել իրավապաշտպանների իրավունքների պաշտպանությանը և ապահովմանն ուղղված լավագույն պրակտիկաների վերաբերյալ: Հետազոտությունը ամփոփում է թե միջազգային, թե տարածաշրջանային և թե ներպետական իրավական կարգավորումներ և տարատեսակ մեխանիզմներ: Մասնավորապես՝ ներկայացված են Կոլումբիայի, Գվատեմալայի, Մեքսիկայի, Բրազիլիայի, Պերուի, Նեպալի օրինակները: Որոշակի անդրադարձ կա նաև եվրոպական երկրների փորձին: Հետազոտությունը մանրամասն ուսումնասիրում է ոչ միայն ներպետական օրենսդրությունները, այլև պետական տարբեր մարմինների պարտավորությունները, պետության կողմից իրականացվող պաշտպանության ծրագրերը: Հետազոտության մեջ տեղ գտած պրակտիկաները կարող են կիրառելի լինել նաև ՀՀ-ում:
- Հետամուտ լինել, որ Հայաստանի կողմից վավերացված ՄԱԿ-ի «Իրավապաշտպանների մասին հռչակագիրը» արդյունավետորեն կիրառվի:

Պետությունների ստանձնած պարտավորությունների ի կատար ածման և վերոնշյալ հռչակագրի տեղայնացման արդյունավետ իրականացման համար «Մարդու իրավունքների միջազգային ծառայություն» կազմակերպությունը մշակել է Մարդու իրավունքների պաշտպանների ճանաչման և պաշտպանության վերաբերյալ մոդելային օրենք, որը կարող է ուղենիշ հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության համար։

- Մեխանիզմներ մշակել իրավապաշտպանների անվտանգության առողջության, անձնական անձեռնմխելության, անձնական կյանքի գաղտնիության ապահովման համար։
- Իրավապահ մարմինների աշխատակազմերում ստեղծել արագ արձագանքման խմբեր՝ բացառապես իրավապաշտպանների գործերով։
- Իրավապաշտպանների իրավունքների խախտման վերաբերյալ առկա գործերի քննությունը և բացահայտումը արագացնել։
- ՄԻՊ-ի գրասենյակում նախատեսել համապատասխան հաստիք՝ իրավապաշտպանների իրավունքների պաշտպանությամբ ի պաշտոնե զբաղվող։
- Քայլեր ձեռնարկել հասարակության շրջանում իրավապաշտպանների գործունեության մասին իրազեկվածության բարձրացման ուղղությամբ։
- Օրենսդրական հավելյալ մեխանիզմներ մշակել իրավապաշտպաններին վիրավորանքներից և զրպարտությունից պաշտպանելու նպատակով։

Փաստաբանների հասցեին իրենց մասնագիտական գործունեության արդյունքում հնչած վիրավորանքներից և զրպարտությունից պաշտանության միջոցներ մշակելու օրինակով նաև համապատասխան միջոցներ նախատեսել լրագրողների և իրավապաշտպանների իրավունքների ապահովման համար։

- Օրենսդրական նախաձեռնությունների միջոցով սոցիալական մեդիան բերել իրավական դաշտ։

Աղբյուրներ

1. http://kentron.am/ru/video/26699297
2. http://forrights.am/2018/09/22/դանիել-իոաննիսյանի-բացահայտումները/
3. https://ngngo.net/hy/news/URGENT:%20ORGANIZATION'S%20STAFF%20MEMBERS%20ARE%20BEING%20PERSECUTED/96?fbclid=IwAR2FN5qYzNpCEirAMqFN7SUz0n6VBtFB2YqpKkpDfaYHWSpvXVcOkqXYXyU
4. https://ngngo.net/hy/news/ra-police-had-prophylactic-talk-with-sevan-aghajanyan/109?fbclid=IwAR27epQlMNieOk0nEtsUe6rkkIrnrVvO3vaDH8Zr8qExuwBJPWRk11U6aL0
5. https://www.youtube.com/watch?v=dFNBYmBbnEM
6. http://zham.hayernews.pro/?p=151
7. https://infocom.am/?p=730&l=am&fbclid=IwAR179JAp5zmNrRkvBNSCy1MUxxcLnSt8znBMmhmm5Otl15ZulcWp5v_8loo
8. https://www.5tv.am/en/news/իրավակամ/մուրազին-ևռուսական ուժերը-կամռուսական ապետը-ևզլմ-ներքը.html?fbclid=IwAR1N3UwmkLwWXoBoYIMrCBI754oOwR2OBPcbxRR3VWpQnNFmp0aYyGkDbZM
9. https://www.pastinfo.am/hy/news/2019/04/03/ակնկալիքներ-չեմ-ունեցել-ոստիկանության-գործողություններից-Բորիս-Մուրազի/817668?fbclid=IwAR0wCqG1evjxZS82lauC_tnmDTu1w52_97zMmCnbQokS6e57cS6AQ8PRYPY
10. https://www.aysor.am/am/news/2019/04/05/%D5%8F%D6%80%D5%A1%D5%B6%D5%BD%D5%A3%D5%A5%D5%B6%D5%A4%D5%A5%D6%80-%D5%AF%D5%AB%D5%B6/1548053?fbclid=IwAR12QLLFuIfa2ZPoQ1zIaJM4Yq5Bovc26MRrdgAY4rTH5uV0a7Qf_8IGMbo

«Իրավունքի ուժ»

հասարակական կազմակերպություն

hrparmenia@gmail.com

+374 41 129004